Նախագիծ
Դ-895-07.05.2010-ԳԿ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ եւ լրացումներ կատարելու մասին

Հոդված 1. «Գովազդի մասին» Հայաստանի Հանրապետության 1996 թվականի ապրիլի 30-ի ՀՕ-55 օրենքի 5-րդ հոդվածը շարադրել հետեւյալ բովանդակությամբ.

«*ՀՈԴՎԱԾ 5. Ընդհանուր պահանջները գովազդի նկատմամբ*

1. Գովազդը պետք է լինի օրինական, հավաստի եւ պատշաճ: Այն պետք է ընկալվի որպես գովազդ՝ առանց լրացուցիչ գիտելիքների եւ տեխնիկական միջոցների:

2. Հայաստանի Հանրապետությունում գովազդի լեզուն գրական հայերենն է:

Գովազդի շարադրաանքը պետք է ապահովի գրական հայերենի անաղարտությունը, պահպանի հայոց լեզվի ուղղագրության, ուղղախոսության, բառագիտության, տառադարձության եւ շարահյուսության կանոնները:

3. Հայաստանի Հանրապետության տարածքում միայն օտար լեզվով գովազդն արգելվում է եւ օրենքով պատժվում:

4. Գովազդատուի հայեցողությամբ, անհրաժեշտության դեպքում, գովազդի (հրապարակային գրվածքի)շարադրանքը կարող է զուգորդվել առավելագույնը երկու օտար լեզուներով, որոնց ընդհանուր ծավալը չպետք է գերազանցի հայերեն շարադրանքի ծավալը (մակերեսը) եւ չներառի տեղեկետվություն, որը ներառված չէ հայերեն շարադրանքում:

Հայերեն գովազդին (հրապարակային գրվածքին) զուգորդված մեկ օտար լեզվով գովազդի ծավալը (մակերեսը) չպետք է գերազանցի հայերեն շարադրանքի ծավալը (մակերեսը) եւ չպետք է ներառի տեղեկատվություն, որը ներառված չէ հայերեն շարադրանքում:

Գովազդի հայերեն շարադրանքը պետք է լինի օտար լեզվով շարադրանքից առաջ կամ աջ հատվածում՝ վերեւից ներքեւ կամ ձախից աջ գրությամբ:

Գովազդի օտարալեզու շարադրանքն իր պատկերային, գունային կամ լուսային լուծումներով չպետք է գերազանցի հայերեն շարադրանքը:

5. Իրենց ապրանքանիշերը (սպասարկման նշանները) եւ մակնիշերը օտար լեզվով գրանցած սեփականատերերը պարտավոր են ապահովել հայերեն զուգահեռ գովազդ՝ հայերենի տառադարձելով տվյալ ապրանքանիշի (սպասարկման նշանի) կամ մակնիշի անվանումը:

Օտար լեզվով բառային, ինչպես նաեւ պատկերով համակցված ապրանքանիշերը (սպասարկման նշաններ) եւ մակնիշերը առանձին վերցված չեն կարող օգտագործվել որպես գովազդ:

6. Հայաստանի Հանրապետության տարածքում օտար լեզուներով լույս տեսնող հրատարակություններում եւ օտար լեզվով հեռարձակվող հաղորդումներում օտար լեզվով գովազդին չզիջող ծավալով (մակերսով) հայերեն զուգորդված շարադրանքը պարտադիր է:

7. Արտոնագրման ենթակա ապրանքների գովազդում «արտոնագրված է» հղումը պարտադիր է:

8. Արգելվում է Հայաստանի Հանրապետությունում չարտոնագրված կամ չգրանցված ապրանքանիշերի (սպասարկման նշանների) եւ մակնիշերի գովազդը:

9. Գովազդում արգելվում է ֆիզիկական անձի անվան կամ պատկերի օգտագործումն առանց վերջինիս համաձայնության»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից մեկ ամիս հետո:

ՕՐԻՆԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Ազգապահպանության գլխավոր երաշխիքներից մեկը մեր մայրենի լեզուն է՝ հայերենը, որի պահպանությունը եւ պաշտպանությունը օրենսդրական կարեւորագույն խնդիր է: 1993թ. ընդունված «Լեզվի մասին» ՀՀ օրենքը, 2002թ. ՀՀ կառավարության հաստատված «Հայաստանի Հանրապետությունում լեզվական քաղաքականության պետական ծրագիրը» եւ մի շարք իրավական ակտեր ուղղված են հայերենի կանոնակարգմանը, պետական լեզվական քաղաքականության արդյունավետ կիրառմանը:

Այնուամենայնիվ, հասարակական կյանքի տարբեր ոլորտներում, զանգվածային լրատվամիջոցներում, գովազդում, պաշտոնական խոսքում քիչ չեն դեպքերը, երբ աղավաղվում, խաթարվում է գրական հայերենը: Ոճական, ուղղախոսական, քերականական սխալները դարձել են համատարած երեւույթ, իսկ ժարգոնը եւ փողոցի լեզուն հեռուստագովազդի եւ հեռուստաթերթերի անբաժան մասն են:

Մայրաքաղաքի եւ հանրապետության համայնքներում, «Գովազդի մասին» ՀՀ օրենքի համատարած խախտումով (ՀՀ-ում գովազդի լեզուն հայերենն է), ճնշող մեծամասնություն են կազմում օտարալեզու հրապարակային գրվածքները, վահանակները, ցուցանակները, հայտարարությունները: Ոտնահարվում են նաեւ հայերենով տեղեկատվություն ստանալու սպառողների իրավունքները: Հայերենի պաշտպանվածության ներկա իրավիճակը օրենսդրական բարեփոխման խնդիր է առաջացնում:

Լեզվի տեսչության վերջին տարիների ստուգումները փաստում են, որ իրավախախտումների թիվն աճելու միտում ունի. անգամ կրկնակի ստուգումների ընթացքում վարչական իրավախախտումները չեն վերացվում՝ «Գովազդի մասին» օրենքի 5-րդ հոդվածի տարաբնույթ մեկնաբանությունների պատճառով:

2010 թվականի սկզբում մշտադիտարկումների արդյունքում միայն մայրաքաղաքի կենտրոնական փողոցներում արձանագրվել է հրապարակային գրվածքների, ցուցանակների, գովազդային վահանակների եւ գովազդային ցուցանակների լեզվական ձեւավորման շուրջ 500 խախտում, որոնց վերացման համար առկա օրենսդրական դաշտի պայմաններում կպահանջվի առնվազն 10 տարի:

«Գովազդի մասին» ՀՀ օրենքում գովազդի նկատմամբ ընդհանուր պահանջների ընդլայնումով (Հոդված 5) ու հստակ պարտականությունների սահմանումով վստահ ենք, որ օրենսդրական դաշտում դրական քայլ կապահովենք լեզվական հարաբերությունների կարգավորման եւ հայերենի պաշտպանության ուղղությամբ:

«Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքում առաջարկվող փոփոխությունները գործող տույժերից ավելի բարձր տույժեր են սահմանում լեզվի բնագավառում օրենսդրության խախտման համար, ինչը կարծում ենք կնպաստի քաղաքացիների եւ պաշտոնական անձանց պատասխանատվության բարձրացմանը:

Օրենդրական նախաձեռնության փաթեթի մաս է կազմում նաեւ «Լեզվի մասին» ՀՀ օրենքում լրացումների նախաձեռնությունը, որը եւս ուղղված է գրական հայերենի պաշտպանվածության ամրապնդմանը:

Օրենսդրական նախաձեռնությունը մշակելիս նկատի ենք ունեցել ԱՊՀ մի շարք երկրների իրավական փորձը:

Հեղինակներ՝ Լիլիթ Գալստյան, Արա Նռանյան, Արծվիկ Մինասյան, Արմեն Ռուստամյան, Հրայր Կարապետյան, Բագրատ Սարգսյան, Արտյուշ Շահբազյան